ՊԱՇՏՈՆ	Վարկային հոսքագծի զարգացման և սպասարկման բաժնի ղեկավար
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ	23/04/2025
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	23/05/2025
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Անորոշ ՝ 3 ամիս փորձաշրջանով

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է փորձառու թեկնածուի, ով կմիանա Թվային բանկինգի թիմին որպես Վարկային հոսքագծի զարգացման և սպասարկման բաժնի ղեկավար

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Բաժնի աշխատանքների կոորդինացում և վերահսկում:
- Բաժնի տարեկան աշխատանքային պլանի կազմում և վերանայում՝ ըստ անհրաժեշտության:
- Վարկային հոսքագծի, դրան հարակից մոդուլների գործունեության անխափան աշխատանքի կազմակերպում
- Նախագծերի բյուջեի պլանավորման և կազմման գործընթացներին մասնակցութուն
- Վարկային հոսքագծում, դրան հարակից մոդուլներում իրականացվող նախագծերի համար անհրաժեշտ բիզնես պահանջների՝ շահագրգիռ ստորաբաժաբումներից հավաքագրման և դրանց հիման վրա տեխնիկական պահանջների ձևավորման գործընթացների ղեկավարում:
- Վարկային հոսքագծում, դրան հարակից մոդուլներում իրականացվող նախագծերի մշակման գործընթացի ղեկավարում
- Վարկային հոսքագծում, դրան հարակից մոդուլներում իրականացվող նախագծերի տեստավորման և գործարկման գործընթացի ղեկավարում
- Անհրաժեշտության դեպքում Բանկի կոմիտեներում նախագծերի և ճանապարհային քարտեզների ներկայացում,
- Անմիջական ղեկավարի պահանջով հաշվետվությունների ներկայացում,
- Իր ենթակայության տակ գտնվող աշխատակիցներին հանձնարարականների տրամադրում, դրանց կատարման գործընթացի վերահսկում ,
- Բանկի ներքին ակտերով, որոշումներով և հրամաններով իրեն վերապահված այլ գործառույթների և իր գործառույթներին առնչվող հանձնարարականների կատարում
- Բանկում սահմանված ներքին, կարգապահական աշխատանքային ռեժիմի և գործարար էթիկայի կանոնների պահպանում:
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բանկային կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակման համար պատասխանատվության կրում:

- Իրեն վստահված Բանկի գույքի նպատակային և միայն ծառայողական նպատակներով շահագործում:
- Պատասխանատու է իր գործունեության ոլորտում ծագող գործառնական ռիսկերը կառավարելու և նվազեցնելու համար:

- Իր ղեկավարած ստորաբաժանման ներքո գործառնական ռիսկի պատահարի տեղի ունենալու դեպքում պարտավոր է խելամիտ ժամկետում պատահարի վերաբերյալ կազմել սպառիչ հաշվետվություն և այն տրամադրել գործառնական ռիսկերի կառավարման բաժնին:
- Պատասխանատու է իր գործունեության ոլորտում ծագող հակակոռուպցիոն ռիսկերը կառավարելու և նվազեցնելու համար և նման պատահարի առաջ գալու դեպքում բարձրաձայնելու համար:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Նվազագույնը 7 տարվա աշխատանքային փորձ, որից 3-ը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում կառավարման փորձ
- Տեխնոլոգիական նախագծեր իրականացնող թիմերի կառավարման հմտություններ
- Արագ և արդյունավետ որոշումներ կայացնելու ունակություն
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ
- Ղեկավարման ունակություն, թիմը կառավարելու հմտություն
- Միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու և ժամկետները պահպանելու ունակություն, ուղղվածություն դեպի արդյունքը,
- Միջին և բարձր օղակների ղեկավարության հետ աշխատելու փորձ;
- Կարծիքներ և տեսակետներ համադրելու և միասնական լուծումներ առաջադրելու ունակություն;
- Գերազանց միջանձնային, հաղորդակցման և խնդիրներ լուծելու հմտություններ;
- Գերազանց գիտելիքներ ֆինանսական և բիզնես պրոցեսների ոլորտում;
- Կոնֆլիկտների կառավարման հմտություններ;
- Ուշադրություն մանրուքների նկատմամբ,
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/144 : Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://www.idbank.am/